



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 08 » սեպտեմբերի 2020թ.


Հ Ր Ա Մ Ա Ն N 199-Ն

ՍԻՄՈՆ ՌՈՒԲԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N° 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N° 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետն ու Սիմոն Ռուբենի Ասատրյանի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության պետի տեղակալի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.4-Ղ4-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի սեպտեմբերի 7-ին անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը (կցվում է)՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Սիմոն Ռուբենի Ասատրյանին նշանակել Կոմիտեի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության պետի տեղակալ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.4-Ղ4-1)՝ 12 ամիս փորձաշրջանով:
2. Սիմոն Ռուբենի Ասատրյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատար (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.5-Ղ3-1) Ստեփան Հայկի Փայասյանին:
3. Սիմոն Ռուբենի Ասատրյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

 Recoverable Signature

X



ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ